

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի  
2018թ. հունիսի 29-ին կայացած արտահերթ նիստի**

Նախագահությամբ՝ ռեկտոր Ա.Լոքյանի  
Քարտուղարությամբ՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի  
Մասնակցությամբ՝ գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

**Օրակարգ՝**

1. Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփում  
Ձեկուցող՝ պրոռեկտոր Չատինյան
2. Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլանների և ժամանակացույցի քննարկում և հաստատում  
Ձեկուցող՝ պրոռեկտոր Չատինյան
3. Մագիստրատուրայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփում  
Ձեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան
4. Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանից առաջ ուսանողների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքների ամփոփում:  
Ձեկուցող՝ բաժնի պետ Ա.Գևորգյան
5. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Արա Ռուլանդի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:  
Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան
6. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:  
Ձեկուցող՝ Պրոռեկտոր Գ.Չատինյան
7. Ընթացիկ հարց: Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Սոլ Փրայս հանրային քաղաքականության դպրոցի պրոֆեսոր, ԱՄՆ Պետքարտուղարության կառավարման «Բեդրոսիան կենտրոնի» գործադիր տնօրեն, «Rolling Hills Estates» քաղաքի քաղաքապետ **Ֆրանկ Վոան Զերունյանին (Օիրունիան) «Ակադեմիայի պատվավոր դոկտոր»** կոչում շնորհելու հարցը:  
Ձեկուցող՝ ռեկտոր Ա. Լոքյան

1. **Լսեցին՝** Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Չատինյան

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Գ.Չատինյանը, Վ.Խաչատրյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ամփոփիչ քննությունների և մագիստրոսական թեզերի պաշտպանության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

2. **Լսեցին՝** Մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլանների և ժամանակացույցի քննարկման և հաստատման հարցը:

Ձեկուցող՝ պրոռեկտոր Չատինյան

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Խ.Բեգիրջյանը, Մ. Մարգարյանը, Լ.Զիլֆուղարյանը:

**Որոշեցին՝** Հաստատել մագիստրատուրայի առկա, հեռակա և հեռավար ուսուցման 2018-2019 ուսումնական տարվա ուսումնական պլանները և ժամանակացույցը (կից ներկայացվում է 2018-2019 ուսումնական տարվա պլանները և ժամանակացույցը):

3. **Լսեցին՝** Մագիստրատուրայի առկա ուսուցման 2017-2018 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ ուսումնամեթոդական վարչության պետ Լ.Զիլֆուղարյան

Ձեկուցողն ամփոփ ներկայացրեց առկա ուսուցման մագիստրատուրայի 2016-2017 ուսումնական տարվա ուսումնական աշխատանքների հաշվետվությունը (կից ներկայացվում է):

**Արտահայտվեցին՝** Գ.Չատինյանը, Խ.Բեգիրջյանը, Ռ.Աղուզումցյանը, Լ.Զիլֆուղարյանը:

**Որոշեցին՝** Ուսումնամեթոդական վարչության աշխատանքները գնահատել լավ:

4. **Լսեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանից առաջ ուսանողների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքների ամփոփման հարցը:

Ձեկուցող՝ բաժնի պետ Ա.Գևորգյան

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Գ.Չատինյանը:

**Որոշեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանից առաջ ուսանողների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

5. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Արա Ռոլանդի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

Ձեկուցող՝ ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Ձեկուցողը նշեց, որ իրավագիտության ամբիոնում 26.06.2018թ. կայացած ամբիոնի նիստում քննարկվել է ամբիոնի հայցորդ ամբիոնի հայցորդ Արա Ռոլանդի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ միջնորդում են գիտական խորհրդին Արա Ռոլանդի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Աշխատանքային իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական հիմնախնդիրները» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վահե Վարդանի Ստեփանյանին:

**Արտահայտվեցին՝** Ա.Եզեկյանը, Հ.Ստեփանյանը, Գ.Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝** ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի հայցորդ Արա Ռոլանդի Մկրտչյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել

«Աշխատանքային իրավունքների պաշտպանության սահմանադրաիրավական հիմնախնդիրները» վերտառությամբ՝ ԺԲ.00.02 «Հանրային իրավունք» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր Վահե Վարդանի Ստեփանյանին:

6. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտների մագիստրոսական թեզերի թեմաների հաստատման հարցը:

Զեկուցող՝ պրոռեկտոր Գ.Չատինյան

Պրոռեկտոր Գ.Չատինյանը ներկայացրեց առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրոսների մագիստրոսական թեզերի թեմաների ցանկը՝ ըստ կրթական ծրագրերի և առաջարկեց հաստատել ներկայացված թեմաները:

**Արտահայտվեցին՝** Գ.Չատինյանը, Հ.Ստեփանյանը, Գ.Հովհաննիսյանը:

**Որոշեցին՝** Հաստատել ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրատուրայի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտների մագիստրոսական թեզերի թեմաները (կից ներկայացվում է ցուցակը):

7. **Լսեցին՝** Ընթացիկ հարց: Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Սոլ Փրայս հանրային քաղաքականության դպրոցի պրոֆեսոր, ԱՄՆ Պետքարտուղարության կառավարման «Բեդրոսիան կենտրոնի» գործադիր տնօրեն, «Rolling Hills Estates» քաղաքի քաղաքապետ **Ֆրանկ Վոամ Զերունյանին (Օիրունիան) «Ակադեմիայի պատվավոր դոկտոր»** կոչում շնորհելու հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա. Լոքյան

Զեկուցողը նշեց, որ Ակադեմիայի բարեկամ Ֆ.Զերունյանը «Հանրային կառավարում» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի անդամ է, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մագիստրանտների և անձնակազմի համար բազմիցս հանդես է եկել հատուկ դասախոսություններով, մշտապես օժանդակում է ուսումնամեթոդական նյութերով, ուսումնական գրականությամբ, խորհրդատվություններով: Հաշվի առնելով գործընկերային հարաբերությունների ամրապնդման հարցում Ֆ.Զերունյանի մեծ ավանդը և հիմք ընդունելով ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կանոնադրության 13 կետի Է) ենթակետ-ը և ՀՀ գիտական խորհրդի կանոնադրության 4-րդ կետի 6-րդ ենթակետը, Ա.Լոքյանն առաջարկեց **Ֆրանկ Վոամ Զերունյանին** շնորհել **«Ակադեմիայի պատվավոր դոկտոր»** կոչումը:

**Արտահայտվեցին՝** Մ.Սարգսյանը, Թ.Խեչոյանը, Ռ.Ադուգունցյանը, Հ.Ստեփանյանը:

**Որոշեցին՝** Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի Սոլ Փրայս հանրային քաղաքականության դպրոցի պրոֆեսոր, ԱՄՆ Պետքարտուղարության կառավարման «Բեդրոսիան կենտրոնի» գործադիր տնօրեն, «Rolling Hills Estates» քաղաքի քաղաքապետ **Ֆրանկ Վոամ Զերունյանին (Օիրունիան)** շնորհել **«Ակադեմիայի պատվավոր դոկտոր»** կոչումը:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

29 հունիսի 2018թ.